ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

ք. Երևան «19» 01 2024թ.

ՀՐԱՄԱՆ N 21-Ա

ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ կետի պահանջը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Կոմիտեի Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կանոնադրական խնդիրներից բխող, մասնավորապես Կոմիտեի Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնելու աշխատանքային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

1/19/2024

X

ԱՐԵՎԻԿ ԱՎՈՅԱՆ

Signed by: AVOYAN AREVIK 6411940428

Պարտականությունները կատարող՝
Արևիկ Ավոյան

Հավելված 1

Կադաստրի կոմիտեի ղեկավարի

«19» 01 2024 թ.

N 21-Ա հրամանի

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Փորձագետ ներգրավելու անհրաժեշտությունը պայմանավորված է Կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման (այսուհետ՝ Ստորաբաժանում) «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) պահանջների համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման, պետական գրանցման դադարեցման, կասեցման, մերժման և անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման համար:

Հաշվի առնելով վերոնշյալ աշխատանքների ծավալների կտրուկ ավելացումը՝ առաջարկվում է Ստորաբաժանում ներգրավել համապատասխան փորձ ունեցող մասնագետ, ով կկարողանա Օրենսդրության համապատասխան իրականացնել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում, պետական գրանցման դադարեցում, տրամադրել պետական գրանցման կասեցման, մերժման որոշումներ և տրամադրել անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկատվության:

2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Փորձագետի ներգրավման նպատակը նրա մասնակցությունն է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցմանը, ինչպես նաև գույքի և դրա նկատմամբ իրավունքների և սահմանափակումների մասին տեղեկատվության տրամադրմանը:

3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ

Պայմանագիրը կնքելու պահից սկսած 1 (մեկ) տարվա ժամկետով:

4. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

1) Փորձագետը 1 (մեկ) տարվա ընթացքում իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքները, մասնավորապես՝

- գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վարույթները կանոնակարգող գերատեսչական ակտերով սահմանված կարգով իր վարույթում գտնվող գույքի նկատմամբ իրավունքների և (կամ) սահմանափակումների պետական գրանցման դիմումների հիման վրա օրենքով սահմանված կարգով իրականացնելու է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում.
- գույքի և դրա նկատմամբ իրավունքների և սահմանափակումների մասին տեղեկատվության տրամադրման գործավարությունը կանոնակարգող իրավական ակտերով սահմանված կարգով տրամադրելու է գույքի և դրա նկատմամբ իրավունքների և սահմանափակումների, ինչպես նաև այլ տեղեկատվություն.
- մասնակցում է ինքնաշխատ ձևով իրավունքների պետական գրանցման համակարգի ստեղծման և ներդրման աշխատանքներին, կատարում է վերլուծություններ, գնահատում է աշխատանքների արդյունավետությունը, տալիս է խորհրդատվություններ, իսկ

անհրաժեշտության դեպքում առաջարկություններ՝ համակարգի արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

Ակնկալվող արդյունքին հասնելու համար փորձագետը իրավունք ունի՝

- հաշվառման տվյալների մուտքագրման բաժնի աշխատակիցներից պահանջելու եզրակացություն՝ գրանցման ենթակա գույքի քարտեզագրման, չափագրման և կադաստրային քարտեզներում առկա տվյալների վերաբերյալ.
- օգտվելու էլեկտրոնային համակարգից և ուսումնասիրելու անհրաժեշտ կադաստրային գործը.

Փորձագետին արգելվում է գրանցել իր կամ իր մերձավոր ազգականների (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր) անվամբ գույքի նկատմամբ իրավունքները:

2) Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

5. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ

Փորձագետի կողմից ներկայացվող հաշվետվությունները նախատեսվում է ներկայացնել ամսական կտրվածքով, յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 5-ը:

6. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Աշխատանքների գնահատման չափանիշներն են՝

1) Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վարույթների ճշտություն

2) Գույքի և դրա նկատմամբ իրավունքների և սահմանափակումների մասին տեղեկատվության տրամադրում:

7. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Փորձագետին ներկայացվող պահանջներն են.

- ՀՀ քաղաքացիություն,
- բարձրագույն կրթություն,
- թիմում աշխատելու ունակություն

8. ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՄԻՏԵՈՒՄ

Փորձագետը Կոմիտեին տրամադրվող փորձագիտական ծառայությունների շրջանակում պետք է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- կայացնել որոշում գույքի գրանցման կամ կասեցման կամ մերժման կամ դադարեցման վերաբերյալ.
- տրամադրել գույքի և դրա նկատմամբ իրավունքների և սահմանափակումների մասին տեղեկատվությունը կամ մերժելու դիմումի պահանջը.
- պահպանել Կադաստրի կոմիտեի ներքին կարգապահական կանոնները, իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով և պայմանագրով իրեն վերապահված պարտականությունները: